Արտատպված է՝ Ի. Ա. Բունին, Վիպակներ և պատմվածքներ, Ե., «Սովետական գրող» հրատարակչություն, 1998. Դորա Եսայանի թարգմանությամբ:

ԿՆՔԱՄԱՅՐԸ

Ամառանոցներ մերձմոսկովյան սոճու անտառներում: Ծանծաղ լիճ, լողարաններ ճահճուտ ափերի մոտ:

Ամենաթանկ ամառանոցներից մեկը լճից ոչ հեռու.

շվեդական ոճի տուն, հինավուրց գեղեցիկ սոճիներ և պայծառ ծաղկանոցներ լայնատարած պատշգամբի առջև:

Տանտիրուհին, ամբողջ օրը թեթև շքեղ ժանյակավոր մատինեով[1], շողշողուն երեսնամյա վաճառականական գեղեցկությամբ և ամառային կյանքի խաղաղ գոհունակությամբ: Ամուսինը մեկնում է Մոսկվա աշխատանքի առավոտյան ինևին, վերադառնում՝ երեկոյան վեցին, ուժեղ, հոգնած, քաղցած, ու անմիջապես գնում լողանալու ճաշից առաջ, թեթևացած հոգով հանվում է օրվա ընթացքում տաքացած լողարանում առողջ քրտինքի, ամուր ռամկական մարմնի հոտ տարածելով. . .

Երեկո հունիսի վերջերին: Պատշգամբի սեղանից ինքնաեռը դեռ չեն տարել: Տանտիրուհին հատապտուղներ է մաքրում մուրաբայի համար: Ամուսնու ընկերը, որ մի քանի օրով հյուր է եկել ամառանոց, ծխում է ու նայում նրա մինչև արմունկները բաց խնամված կլորիկ թևերին: (Հին ռուսական սրբապատկերների գիտակ և հավաքող, բարեկազմ նիհար մի մարդ խուզված փոքր բեղերով, աշխույժ հայացքով. թենիս խաղալու հագուստով): Նայում է ու ասում.

— Կնքամայր, կարելի՞ է ձեր ձեռքը համբուրել: Չեմ կարողանում հանգիստ նայել:

Ձեռքերը հյութի մեջ են, մոտեցնում է փայլփլող արմունկը: Հազիվ շրթունքները դիպցնելով, ասում է կմկմալով.

— Կնքամայր. . .

— Ի՞նչ է, կնքահայր:

— Գիտեք, ինչ է պատահել, մի մարդու սիրտ ձեռքից գնացել է, ու նա ասել է խելքին՝ մնաս բարով:

— Ինչպե՞ս թե սիրտը ձեռքից գնացել է:

— Դա Սաադիից է, կնքամայր: Այդպիսի պարսկական բանաստեղծ է եղել:

— Գիտեմ: Բայց ի՞նչ կնշանակի սիրտը ձեռքից գնացել է:

— Դա նշանակում է, որ մարդը սիրահարվել է: Ահա ինչպես ես՝ ձեզ:

— Երևում է, դուք էլ եք ձեր խելքին ասել՝ մնաս բարով:

— Այո, կնքամայր, ասել եմ:

Ժպտում է ցրված, իբր միայն իր գործով զբաղված:

— Որի համար ձեզ շնորհավորում եմ:

— Ես լուրջ եմ ասում:

— Բարով վայելեք:

— Սա վայելելու բան չէ, կնքամայր, սա շատ ծանր հիվանդություն է:

— Խե՜ղճ մարդ: Պետք է բուժվել: Եվ վաղո՞ւց է սկսվել:

---

[1] Առավոտյան զգեստ (ֆր.):

— Վաղուց, կնքամայր: Գիտե՞ք ո՛ր ժամանակից: Այն օրից, ինչ ես և դուք Սավելևների մոտ կնունք էինք անում. չգիտեմ որ սատանան դրանց խելքին փչեց հենց ինձ ու ձեզ կանչել կնքելու. . . Հիշո՞ւմ եք, ինչ բուք-բորան էր այդ օրը, և ինչպես դուք եկաք ոտքից գլուխ ձնակոլոլ, արագ մեկնելուց ու բուքից բորբոքված, ինչպես ես հանեցի ձեր վրայից սամույրե մուշտակը, և դուք մտաք սրահ՝ մետաքսե համեստ սպիտակ զգեստով մարգարտյա փոքրիկ խաչը թեթևակի բաց կրծքին, իսկ հետո թևքերը ետ ծալած պահել էիք երեխային ձեր գրկում, կանգնել ինձ հետ կնքավազանի մոտ, նայում էիք ինձ մի տեսակ շփոթված կիսաժպիտով. . . Ահա հենց այդ ժամանակ էլ մեր մեջ սկսվեց մի թաքուն, մի հանցավոր մոտիկություն, մեր իբր արդեն հարազատանալը, այդ պատճառով հատկապես տենչալի. . .

— Parles pour vous[2]. . .

— Իսկ հետո մենք կողք-կողքի կանգնել էինք նախաճաշի ժամանակ, և ես չէի հասկանում այդ հրաշալի, ջահել, թարմ բուրմունքը սեղանին դրված հիացինտն է սփռում, թե դուք. . . Ահա հենց այդ ժամանակից էլ հիվանդացա: Եվ բուժել ինձ կարող եք միայն դուք:

Կինը նայեց աչքի պոչով.

— Այո, այդ օրը լավ հիշում եմ: Իսկ ինչ վերաբերում է բուժմանը, ափսոս, որ Դմիտրի Նիկոլաևիչն այսօր Մոսկվայում է գիշերելու, նա ձեզ անմիջապես իսկական բժիշկ կհանձնարարեր:

— Իսկ ինչո՞ւ է Մոսկվայում գիշերում:

— Առավոտյան կայարան գնալիս ասաց, որ այսօր փայատերերի հանդիպում պետք է լինի քաղաքից մեկնումներից առաջ: Բոլորը մեկնում են որևէ տեղ՝ ոմանք Կիսլովոդսկ, ոմանք արտասահման:

— Բայց նա կարող էր ժամը տասներկուսի գնացքով վերադառնալ:

— Հապա նիստից հետո հրաժեշտի քե՞ֆը «Մավրիտանիայում»:

Ճաշի ժամանակ նա տխուր լսում էր, հանկարծ կատակեց.

— Ես էլ վեր չկենա՞մ գնամ «Մավրիտանիա» ժամը տասի գնացքով, մի լավ խմեմ, բրուդերշաֆտ խմեմ ավագ սպասավորի հետ:

Կինը երկար նայեց նրան.

— Գնաք ու ինձ մենա՞կ թողնեք այս դատարկ տանը: Այդպե՞ս եք հիշում դուք հիացինտները:

Եվ լուռ, իբր ինքն իր մտքերի հետ, ձեռքը դրեց սեղանին նրա ձեռքի վրա. . .

Գիշերվա ժամը երկուսին մոտ, մութ, լռության մեջ թաղված տանը, ճաշասենյակի ժամացույցի հատու տկտկոցի տակ նա միայն տնային խալաթով կնոջ ննջարանից գաղտագողի գնաց իր սենյակը, որի մթության մեջ այգու կողմի բաց պատուհանից միայն հեռավոր մեղմ լույս էր ընկնում ամբողջ գիշեր չմարող վերջալույսից և ներս էր լցվում անտառի գիշերային զով բույրը: Երանությամբ մեջքի վրա մեկնվելով անկողնուն, շոշափելով գիշերասեղանիկի վրա գտավ լուցկին ու ծխախոտատուփը, ագահորեն ծխեց ու փակեց աչքերը, հիշելով իր անասելի երջանկության մանրամասնությունները:

Առավոտյան պատուհանից մանրամաղ անձրևի խոնավություն էր լցվում, պատշգամբին հավասար տկտկում էին անձրևակաթիլները: Նա բացեց աչքերը, հաճույքով ըմբոշխնեց սովորական կյանքի սքանչելի պարզությունը, մտածեց. «Այսօր կմեկնեմ Մոսկվա, վաղը չէ մյուս օրը՝ Տիրոլ կամ Գարդա լիճ», և նորից քնեց:

Նախաճաշի դուրս գալով, հարգանքով համբուրեց տանտիրուհու ձեռքը և համեստորեն սեղանի մոտ նստելով, փռեց անձեռոցիկը. . .

---

[2] Ձեր մասին խոսեք (ֆր.):

— Ներող եղեք,— ասաց կինը, ջանալով իրեն որքան կարելի է անկաշկանդ պահել,— միայն սառը միս է և մածուն: Սաշա, կարմիր գինի բերեք, դուք նորից մոռացել եք. . .

Հետո, առանց աչքերը բարձրացնելու.

— Խնդրեմ հենց այսօր մեկնեք: Դմիտրի Նիկոլաևիչին ասացեք, որ դուք էլ շատ ուզեցիք Կիսլովոդսկ մեկնել: Ես այնտեղ կգամ մի երկու շաբաթ հետո, իսկ նրան կուղարկեմ Ղրիմ, ծնողների մոտ, այնտեղ նրանք հիանալի ամառանոց ունեն Միսխորում. . . — Շնորհակալություն, Սաշա: Դուք մածուն չե՞ք սիրում, պանիր կուզե՞ք: Սաշա, պանիր բերեք, խնդրեմ. . .

— «Սիրո՞ւմ եք դուք պանիր, հարցրին մի օր կեղծ բարեպաշտին»,— ասաց նա անհարմար ծիծաղելով:— Կնքամայր. . .

— Լա՛վ կնքամայր եմ:

Նա սեղանի վրայից սեղմեց կնոջ ձեռքը, ասելով կամացուկ.

— Իսկապե՞ս կգաք:

Կինը պատասխանեց խաղաղ ձայնով, նայելով նրան թեթևակի քմծիծաղով:

— Իսկ ի՞նչ ես կարծում: Կխաբե՞մ:

— Ինչպես շնորհակալ լինեմ քեզնից:

Ու տեղնուտեղն էլ մտածեց. «Իսկ այնտեղ, այդ լաքե երկարաճիտք կոշիկներով, ամազոնուհու զգեստով ու գլխարկով, հավանաբար անմիջապես սոսկալի պիտի ատեմ»:

25 սեպտեմբերի 1943